

3767

Ի. ՄՏԱԼԻՆ

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3K3G

S-87

ՄՈՍԿՎԱ, 1927

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

24 AUG 2013

3K36
9-87

սյ

2 JUN 2005

20 NOV 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կազմեց՝ Իվ. ՏՈՎՍՏՈՒՆՍ.

1007
33582

534
~~1322~~

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՁՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

2085 JUL 8 5

3767

4. U.S. LIBRARY

LIBRARY OF THE
U.S. DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT
WASHINGTON, D.C.

48-92



Главлит № 82.429.

Тираж 2,500 экз.

Типография Госиздата „Красный Пролетарий“. Москва, Пименовская, 16.

ՍՏԱԼԻՆ (Ջուդաշվիլի), Իոսիֆ Վիսսարիոնովիչ—ծնվել է 1879 թ. Գորի քաղաքում (Թիֆլիսի նահանգ): Ազգով—վրացի յե. հայրը բանվոր էր, Թիֆլիսի գավառի Դիգո-Լիլո գյուղից, աշխատում էր Թիֆլիսում՝ Ադելխանովի կոշակարի գործարանում:

1893 թ. Ստալինը ավարտեց Գորիի հոգևոր դպրոցը և նույն տարում ընդունվեց Թիֆլիսի Հոգևոր Ուղղափառ սիմինիարիան: Այն ժամանակ Սեմինարիան Թիֆլիսում հանդիսանում էր յերիտասարդության շրջանում ամեն տեսակի—թե ժողովրդական-ազգային և թե մարքսիստական-միջազգային—ազատագրական եղեյաների վայր: Սեմինարիայում հախուն գործում են ամեն տեսակի կրոնականներ: 1897 թ. Ստալինը գլուխ է կանգնում Սեմինարիայի մարքսիստական կրոնականների: Հենց այդ շրջանում նա Թիֆլիսում կապ է հաստատում սոցիալ-դեմոկրատական անլեզալ կազմակերպության հետ, նրանից ստանում անլեզալ գրականություն, մասնակցում Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցների բանվորների անլեզալ ժողովներին և այլն:

1898 թ. Ստալինը ձևականորեն ընդունվում է Ռուսաստանի Սոց.-Դեմ. Բանվորական Կուսակցության Թիֆլիսի կազմակերպության մեջ: Ստալինը այդ շրջանում պրոպագանդիստական աշխատանք է տանում յերկաթուղային և գործարանային ռայոնների բանվորական կրուժոկներում: Սեմինարիայում, ուր «կասկածելիներին» հետապնդելու գործը վատ չեք դրված, սկսում են գլխի ընկնել Ստալինի անլեզալ աշխատանքի մասին, և նրան այնտեղից դուրս են անում:

1899—1900 թ.թ. Ստալինը բանվորական կրուժոկներում յեռանդով տանում է պրոպագանդիստական աշխատանք: 1900 թ. հիմնվում է Ռ.Ս.-Դ.Բ.Կ. Թիֆլիսի Կոմիտեն: Ստալինը դառնում է Թիֆլիսի Կոմիտեյի անդամ և այդ Կոմիտեյի ակադնավոր ղեկավարներից մեկը: Այդ շրջանում Թիֆլիսում բանվորական շարժումը՝ բանվորական միջավայրից յելած «ականավոր անհատներին» հին՝ զուտ-պրոպագանդիստական աշխատանքի շրջանակներից սկսում է դուրս գալ. — մասսաների մեջ թերթիկների միջոցով ազդեցության մղվում առույթ հրատապ թեմաների շուրջը՝ թուղցիկների և քաղաքական դեմոնստրացիաների միջոցով — ընդդեմ ցարիզմի: Մաստկանում է վեճը «ծերերին» (զուտ-պրոպագանդիստական աշխա-

տանքի հին մեթոդների կողմնակիցների) և «յերիտասարդների» («փոքր»-ի կողմնակիցների) միջև: Ստալինը — «յերիտասարդների» կողմն է: Պետք է շեշտել այն խոշոր դերը (աշխատանքի նոր մեթոդների հաղթանակի գործում, ինչպես նաև Ստալինի հեղափոխական դաստիարակչության գործում), վոր այն ժամանակ Թիֆլիսում կատարեց ընկ. Կուրնատովսկին — Լենինի մերձավոր գործակիցը և Անդրկովկասում լենինյան իդեյաները առաջին անգամ տարածողը:

1900—1901 թ. Թիֆլիսում տնտեսական գործադուլների և Թիֆլիսի կենտրոնում մայիսյան քաղաքական հայտնի դեմոնստրացիայի հետևանքով ավերում, ցաք ու ցրիվ են անում Թիֆլիսի Կոմիտեն: 1901 թվին խուզարկություն է կատարվում Ստալինի բնակարանում և ախրանկան կարգադրում է Ստալինին ձերբանալել. սակայն այդ գաղտնի կարգադրության մասին իմացվում է և Ստալինը թափվում: Այդ ժամանակից Ստալինը դառնում է պոպուլիստի պրոֆեսիոնալ հեղափոխական և պոպուլիստ (թագստում) մնում է մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը՝ տանելով հեղափոխական աշխատանք, հետևյալ ծածկանունների տակ — «Դավիթ», «Կոբա», «Նիժերաձե», «Զիփիկով», «Իվանովիչ», «Ստալին»:

1901 թ. վերջում Ստալինը անցնում է Բաթում, այնտեղ հիմնում է Ռ.Ս.-Դ.Բ.Կ. Բաթումի Կոմիտեն, ղեկավարում է գործադուլները Ռոսշիլդի և Մանթաշևի գործարաններում և կազմակերպում բանվորների հայտնի քաղաքական դեմոնստրացիան 1902 թ.: 1902 թվի մարտին Ստալինին ձերբակալում են Բաթումում և բանտում նրան մինչև 1903 թ. պահելով, յերեք տարով աքսորում են Արևելյան Սիբիր—Իրկուտսկու նահանգի Նովայա Ուդա գյուղը:

Տեղ հասնելով՝ մեկ ամսից հետո (հունվ. 1904 թ.) Ստալինը փախչում է աքսորից, գալիս է Թիֆլիս և աշխատանք է տանում՝ վորպես Անդրկովկասի շրջանային կազմակերպության անդամ: Ստալինի աշխատանքը 1904—1905 թ.թ. շրջանում անցնում է մենչևիզմի դեմ մղած կատաղի պայքարի դրոշակի տակ: Ստալինը շարունակ շրջում է Անդրկովկասի ռայոնները (Բաթում, Զիատուրի, Գուրայիս, Թիֆլիս, Բագու)՝ թե խոսքով և թե մամուլի մեջ դիսկուսիա տանելով ընդդեմ մենչևիզմի, ինչպես նաև ընդդեմ եսերնեթի, անարխիստների, նացիոնալիստների:

Դեռ 1903 թվին, գտնվելով բանտում և կուսակցության II համագումարից յեկած ընկերներին տեղեկանալով բոլշևիկների ու մենչևիկների

միջև յեղած լուրջ տարաձայնությունների մասին, Ստալինը վճռականորեն հարում է բոլշևիկների կողմը: Աբսուրից վերադառնալով, յերբ պայքարը բոլշևիկների ու մենչևիկների միջև սուր կերպարանք էր ստացած, Ստալինը անցնում է Անդրկովկասյան բոլշևիկների գլուխը, ղեկավարում է բոլշևիկյան անլեգալ որգան «Բայրբա Պրոլետարիատա» (1905 թ.) և ակտիվ մասնակցություն է ունենում բոլշևիկների III համագումարի կազմակերպման գործում: 1905 թ. «Հոկտեմբերյան մանիֆեստի» հրատարակման որերին Ստալինը գտնվում էր Թիֆլիսում, ուր պայքար էր մղում հեղափոխության բոլշևիկյան լոզունգների ոգտին: Այդ շրջանին է վերաբերում Ստալինի «Կուսակցական տարաձայնությունների մասին» բրոշյուրը (վրացերեն լեզվով): 1905 թ. վերջին Ստալինը անդրկովկասյան բոլշևիկների կողմից պատվիրակ է ընտրվում և գնում Համառուսական Բոլշևիկյան Կոնֆերենցիային—Տամբերֆորսում (Ֆինլանդիա), ուր նա վերջնականապես կապվում է Լենինի հետ:

1906 թիվն է: 1905 թվի հեղափոխությունը ջախջախելու շրջանն է—«Նոր» Դումայի ընտրությունների և կուսակցության՝ Ստոքհոլմի համագումարին նախապատրաստվելու շրջանը: Բոլշ-

շեկիները—կողմնակից են Դուսման բոլորոտելուն։ Պայքարը բոյլշեկիների և մենշեկիների միջև նորեն ուժգին բռնկվում է։ Հրապարակ են գալիս անարխո-սինդիկալիստական ելեմենտներ։ Նրանք սկսում են աղմկել մանավանդ Թիֆլիսում։ Ստալինը—Անդրկովկասի այդ բոլոր հակապրոլետարական հոսանքների դեմ մղվող պայքարի կենտրոնումն է։ Այդ շրջանին է վերաբերում «Դրո» (ժամանակ) բոյլշեկյան ամենօրյա լեզգալ լրագիրը, վոր լույս եր տեսնում Թիֆլիսում, Ստալինի խմբագրությամբ։ Այդ ժամանակին է վերաբերում Ստալինի մեծ հողվածների սերիան վրացերեն լեզվով—«Անարխիզմ և սոցիալիզմ»։ Ստոքհոլմի համագումարում (1906 թ.) Ստալինը ներկայանում է վորպես պատգամավոր՝ Թիֆլիսի կազմակերպության բոյլշեկյան մասի կողմից։

1907 թ. սկսվում է Ստալինի հեղափոխական գործնեյության Բագվա շրջանը։ Վերադառնալով կուսակցության լոնդոնյան համագումարից, Ստալինը թողնում է Թիֆլիսը և բնակություն հաստատում Բագվում, ուր նա անդադրուն աշխատում է ղեկավարում է բոյլշեկյան անլեզալ որդան «Բակինսկիյ Ռաբոչիյ», հաջողությամբ կազմակերպում է պայքարը՝ մենշեկիներին դուրս անելու Բագվա բանվորական ռայոններից (Բալախանի,

Բիբի-Նյբատ, Չյորնիյ-գորոդ, Բելիյ-գորոդ), ղեկավարում է բանվորների ու նավթարդյունաբերողների միջև կոլլեկտիվ պայման կնքելու կամպանիան և վերջիվերջո հասնում է բոյլշեկիզմի կատարյալ հաղթանակին Բագվա կազմակերպության շարքերում։ Այդ ժամանակից Բագուն դառնում է բոյլշեկիզմի միջնաբերդ։

1908 թ. մարտին Ստալինին ձերբակալում են և, ութ ամիս բանտում պահելուց հետո, յերեք տարով աքսորում Սոյվիչեգոդսկ (Վոլոգոդսկու նահանգ)։ Մի քանի ամսից հետո Ստալինը փախչում է աքսորից և վերադառնում Բագու անլեզալ աշխատանքի։

1910 թվին նորեն ձերբակալում են Ստալինին և մի քանի ամիս բանտ նստեցնելուց հետո, յետ ուղարկում կրկին Սոյվիչեգոդսկ՝ աքսոր։

1911 թվին Ստալինը նորեն փախչում է աքսորից և կուսակցության կենտկոմի առաջարկությամբ այս անգամ բնակություն է հաստատում Պետերբուրգում։ Այդ ժամանակից սկսվում է Ստալինի հեղափոխական գործնեյության պետերբուրգյան շրջանը։ Բայց Ստալինին չհաջողվեց յերկար ապրել Պետերբուրգում։ Նրան նորեն ձերբակալում են և աքսորում Վոլոգդա։

1911 թվի վերջին Ստալինը աքսորից նորեն

փախչում ե Պետերբուրգ, ուր նա ղեկավարող աշխատանք ե տանում պողպտլիայում: Այժմ (1912 թ.) Ստալինը արդեն կուսակցության Կենտկոմի անդամ ե (ընտրել էյին Ստալինի բացակայության միջոցին, կուսակցության՝ Պրազայի հայտնի կոնֆերենցիայում): Կուսակցության հանձնարարությամբ Ստալինը շրջում ե Ռուսաստանի կարևորագույն ուսյոնները, հերթական «մայովկայի» նախապատրաստական աշխատանք տանում, Լենայի գործադուլների ողբերին ղեկավարում «Զվեզդա» թերթը և ղեկավարող մասնակցություն ե ունենում «Պրավդա» թերթի հիմնադրման գործում:

1912 թ. ապրիլին Ստալինին նորեն ձերբակալում են և, մի քանի ամիս բանտում պահելուց հետո, աքսորում են Նարիմսկու շրջանը՝ չորս տարով: Ստալինը նույն տարվա ամառը աքսորից փախչում ե Պետերբուրգ, այնուհետև մեկնում Կրակով՝ Լենինի մոտ, մասնակցում ե բոլշևիկների հայտնի խորհրդակցությանը Կրակովում 1912 թ. վերջը, և ապա վերադառնում Պետերբուրգ, ուր ստանձնում ե Դումայի ֆրակցիայի բոլշևիկյան մասի, ինչպես նաև՝ բոլշևիկյան «Զվեզդա» և «Պրավդա» թերթերի ղեկավարությունը: Այդ շրջանին են վերաբերում Ստա-

լինի «Մարքսիզմ և ազգային հարցը» բրոշյուրը*):

1913 թ. գարնանը Ստալինին նորեն ձերբակալում են և մի քանի ամսից հետո աքսորում Տուրուխանսկի շրջանը:

1913—14—15—16 թվերին, 4 տարի, Ստալինը անց ե կացնում աքսորի մեջ, Տուրուխանսկու շրջանի Կուրեյկա գյուղում:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ստալինը վերադառնում ե Պետերբուրգ և կուսակցության ղեկավարող աշխատանքին մասնակցում վորպես Կենտկոմի անդամ: Բոլշևիկների ապրիլյան համառուսական կոնֆերենցիայում, յերբ կուսակցության մեջ յերևան յեկան յերկու հոսանք, Ստալինը վճռականապես պաշտպանում ե Լենինի պողիցիան: 1917 թ. մայիսին, կոնֆերենցիայից հետո, հիմնվում ե Կենտկոմի Քաղբյուրո. Ստալինը ընտրվում ե Քաղբյուրոյի անդամ: Այդ ժամանակից Ստալինը մնում ե Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ: Հոկտեմբերյան ապստամբության նախապատրաստման ամբողջ շրջանում Ստալինը գործում ե Լենինի հետ միանգամայն համերաշխ: Կորնիլովշինայի շրջանում,

*) Բրոշյուրի հայերեն թարգմանությունը տրված ե Ստալինի «Ազգային հարց» զբրում, հրատ. ԽՍՀՄ Ժող. Կենտ. Հրատարակչ. Մոսկվա, 1927:

Դեմոկրատական Խորհրդակցության և Նախապարլամենտի շրջանում, 1917 թ. հոկտեմբերին ապստամբությունը կազմակերպելու շրջանում, վերջապես, այն շրջանում, յերբ վեճեր ելին տեղի ունենում՝ Հոկտեմբերի հաջորդ ուր «միատարր-սոցիալիստական կառավարություն» կազմելու մասին, — Հոկտեմբերի նախապատրաստման ու ամրապնդման այդ բոլոր շրջաններում, յերբ կուսակցության մի մասի յերերումները (Կամե-նև, Զինովև) սպառնում ելին գործը տապալել, Ստալինը միշտ մնաց Լենինի մերձավոր ոգնականը և համախոհը: Հուլիսյան դեմոնստրացիայի շրջանում, մինչև հոկտեմբեր, Ստալինը հանդիսանում եր կուսակցության կենտրոնական որգանի («Ռաբոչիյ ի սոլդատ», «Պրոլետարիյ», «Ռաբոչիյ», «Ռաբոչիյ սոլուտ») և այլն) փաստական ղեկավարը: Հոկտեմբերյան որերին Կենտկոմը Ստալինին ընտրում ե «Հնգյակ»-ի անդամ (կոլլեկտիվ ապստամբության քաղաքական կողմը ղեկավարելու համար) և «Յոթնյակ»-ի անդամ (կոլլեկտիվ ապստամբության կազմակերպչական կողմը ղեկավարելու համար):

Ստալինը 1917 թվից — Խորհուրդների Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի անդամ ե: 1917 թվից մինչև 1923 թիվը Ստալինը յեղել ե Ազ-

գությունների Գործերի Ժողովրդական Կոմիսար, իսկ 1919—1922 թ.— Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսար: 1923 թվից Ստալինը ընտրվում ե Կուսակցության Կենտկոմի քարտուղար, և այդ պաշտոնում ե մինչև այսօր: 1925 թվից — Կոմինտերնի Գործկոմի նախագահության անդամ ե:

Քաղաքացիական պատերազմի շրջանը Ստալինը անց ե կացրել բացառապես ֆրոնտներում: 1918 թվին (գարնանը և ամառը) Ստալինը աշխատել ե Յարիցինի ֆրոնտում՝ Վորոշիլովի և Մինինի հետ միասին կազմակերպելով Յարիցինի պաշտպանությունը հանդեպ Կրասնովի գորքերի: 1918 թվի վերջին, ընկ. Զերժինսկու հետ միասին հրահանգում ե III բանակի ֆրոնտը Պերմի ռայոնում՝ ամեն կերպ աջակցելով մեր նահանջը կանգնեցնելուն: 1919 թ. գարնանը Ստալինը աշխատում ե Պետերբուրգի ֆրոնտում, կազմակերպելով մեր հարձակումը ընդդեմ Յուդենիչի առաջին գրոնի Պիտերի վրա: 1919 թ. ամառը Ստալինը աշխատում ե Արևմտյան ֆրոնտում, Սմոլենսկում, կազմակերպելով դիմադրության գործը՝ ընդդեմ լեհերի հարձակման: 1919 թ. ձմեռը Ստալինը աշխատանք ե տանում Հարավային ֆրոնտում՝ Դենիկինի գորքերի հանդեպ, այնտեղ մնալով մին-

չև այն ժամանակ, յերբ Դենիկինը Չարդվեց և մեր զորքերը գրավեցին Ռոստովն ու Ողեսսան: 1920 թվին Ստալինը աշխատանք է տանում Հարավ - Արևմտյան (հակալեհական) Ֆրոնտում, անմիջական ղեկավարող մասնակցութիւն ունենալով լեհական Ֆրոնտը ձեղքելու գործում (Ժիտոմիրի ռալոնում), Կիյևի ազատման և մեր զորքերի՝ դեպի Լվով առաջխաղացման գործում: Նույն 1920 թ. Ստալինը աշխատանք է տանում Ուկրայինայի հարավային մասում՝ Վրանգելի հարձակումներին դիմադրելու գործը կազմակերպելով: 1920 թվից մինչև 1923 թ. Ստալինը — Հանրապետութեան Ռազմա-Հեղափոխական Խորհրդի անդամ է: Ռազմական արժանիքների համար ունի Կարմիր Դրոշի Շքանշան:

Ստալինի կարևորագույն բրոշյուրներից են — «Մարքսիզմ և ազգային հարցը», «Հոկտեմբերի ճանապարհին», «Լենինի և լենինիզմի մասին», «Լենինիզմի հարցեր»:

«Ազգային գրադարան



NL0186068

ԳԻՆԸ 7 ԿՈՊ.

- 02 -



Иосиф Виссарионович

СТАЛИН

Краткая биография.
Составил Ив. ТОВСТУХА.

На армянском языке

Центральное Издательство Народов Союза ССР
Москва, Никольская, 10.